

Ժամանակավոր ընթացակարգ

Երևան քաղաքի բնակարանային ֆոնդի գազամատակարարման վերականգնման և գազիֆիկացման աշխատանքների կատարման «(Մեկ պատուհանից) սկզբունքով»

I. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն ընթացակարգը մշակված է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 08.07.2005թ. N95-Ն որոշմամբ հաստատված «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններ»-ի (ԳՄՕԿ) հիման վրա:

1.2 Ընթացակարգի կիրառումը պարտադիր է «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ ԳԳՄ-ների այն ստորաբաժանումների համար, որոնք իրականացնում են ներտնային գազասպառման համակարգերի կառուցման կամ առկա գազասպառման համակարգերի վերականգնման դիմումների ընդունման, տեխնիկական պայմանների մշակման և առաջադրման, էսքիզների և նախագծերի կազմման, շին-հավաքակցման աշխատանքների կատարման, ինչպես նաև պատրաստի գազահամակարգերի շահագործման ընդունման և թողարկման գործառույթներ:

1.3 Բնակարանային ֆոնդի գազամատակարարման վերականգնումն ու գազիֆիկացումը դիտարկվում է առանձին տեսանկյուններով՝ բազմաբնակարան շենքերի բնակարանների կամ առանձնատների գազամատակարարման վերականգնում կամ գազիֆիկացում.

- գազիֆիկացվող անհատական բնակարանի (առանձնատան) համար կազմվում են նախագծա-նախահաշվային փաստաթղթեր.
- բազմաբնակարան շենքերի բնակարանի (առանձնատան) գազամատակարարման վերականգնման համար հիմք են ընդունվում նախկին տեխնիկական պայմանները, նախագծային փաստաթղթերը և յուրաքանչյուր բնակարանի ներտնային գազասպառման համակարգի գազատար խողովակների փոփոխությունն իրականացվում է գծապատկերով (էսքիզով):
- բազմաբնակարան շենքի յուրաքանչյուր բնակարանի գազիֆիկացման համար կազմվում են առանձին տեխնիկական պայմաններ և նախագծա-նախահաշվային փաստաթղթեր.
- նախկինում գազիֆիկացված բնակարանում (առանձնատան) մինչև երկու գազօգտագործող սարքավորման տեղափոխման կամ մեկ լրացուցիչ սարքավորման տեղադրման դեպքում թույլատրվում է նախագծի վրա փոփոխություն կատարել գծապատկերով (էսքիզով):

1.4 Ներտնային գազասպառման համակարգերի գազիֆիկացումը և գազամատակարարման վերականգնումն իրականացվում է ԳԳՄ-ի կողմից՝ բնակարանի սեփականատիրոջ (վարձակալի, օգտագործողի) միջոցների հաշվին:

1.5 Գազօգտագործվող սարքավորումների, ծխաօդատար ուղիների վերականգնման կամ վերանորոգման կամ փոխարինման ծառայությունները կատարվում են համաձայն ԳՄՕԿ-ի պահանջների:

2. *Դիմումների ընդունում, միացման պայմանագրի կնքում, նախագծային և էսքիզային աշխատանքների կազմակերպում*

2.1 Առանձնատների և բազմաբնակարան շենքերի բնակարանների գազիֆիկացման կամ գազամատակարարման վերականգնման նպատակով «Ջայնուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից սահմանված ձևով դիմումները ընդունվում են ԳԳՄ տնօրենի (կամ նրա լիազորված անձի) անունով՝ ԳԳՄ-ի նախագծա-նախահաշվային ծառայությունում (այսուհետ՝ ՆՆԾ):

Ծանոթություն՝ 1. Պատվիրատուների կողմից ներկայացված դիմումները և սույն ընթացակարգին համապատասխան կատարված բոլոր գործողությունների վերաբերյալ տեղեկատվությունները գրանցվում են համակարգչում և գործընթացի անթերի կատարման նպատակով յուրաքանչյուր 10 օրը մեկ ՆՆԾ-ը ԳԳՄ-ի տնօրենին տեղեկատվություն է ներկայացնում աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

2. Դիմումի հետ բնակիչը ներկայացնում է անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականի կամ վարձակալության իրավունքի գրանցման վկայականի և անձնագրի պատճենները:

3. Դիմումում նշվում են գազասպառող սարքավորումների անվանումները և տիպերը:

2.2 ԳԳՄ-ում դիմումները ստանալուց 14-օրյա ժամկետում ՆՆԾ-ը ուսումնասիրում է բնակարանի (առանձնատան) գազիֆիկացման կամ գազամատակարարման վերականգնման հնարավորություններն ու տեխնիկական պայմանները: Բացասական արդյունքի դեպքում գրավոր պատասխանվում է բնակչին, իսկ տեխնիկական պայմանների առկայության կամ հնարավորության դեպքում դիմողի հետ կնքվում է միացման պայմանագիր՝ ԳՄՕԿ-ով սահմանված ձևով:

Ծանոթություն՝

▪ *Միացման պայմանագիր՝ գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացման համար մատակարարի և միացման համար դիմող անձի միջև կնքվող պայմանագիր, որում ներառված են մատակարարի և դիմող անձի պարտականությունները, ինչպես նաև միացման տեխնիկական պայմանները:*

2.3 Միացման պայմանագիրը կազմվում է ՆՆԾ-ի կողմից և դիմողի կողմից ստորագրվելուց հետո ներկայացվում է ԳԳՄ տնօրենի (կամ նրա լիազորված անձի) ստորագրությամբ:

Ծանոթություն՝ 1. Տեխնիկական պայմանների առաջադրումն իրականացվում է վճարովի հիմունքներով:

2. Միացման պայմանագրով սահմանված նախագծման աշխատանքների վճարը կատարվում է ԳԳՄ-ի հաշվարկային հաշվին:

3. Գազիֆիկացվող բազմաբնակարան շենքերում, որտեղ ըստ տեխնիկական լուծումների աստիճանավանդակներում նախատեսվում է օդափոխության նպատակով տեղադրել դեֆլեկտորներ, յուրաքանչյուր բաժանորդ մատակարարի կողմից նախապես կատարված հաշվարկների հիման վրա վճարում է իր բաժնեմասի չափով: Նշվածը բավարար հիմք է դեֆլեկտորի տեղադրման աշխատանքը իրականացնելու համար: Վերջինիս արժեքի ամբողջական փոխհատուցումը իրականացվում է աստիճանական կարգով, ըստ բնակարանների գազիֆիկացման:

- 2.4 Միացման պայամանագրերի հիման վրա նախապատրաստվում են նախագծա-նախահաշվային փաստաթղթերի (այսուհետ՝ ՆՆՓ) ցուցակները, հաստատվում են տնօրենի (կամ նրա լիազորված անձի) կողմից:
- 2.5 Տնօրենի (կամ նրա լիազորված անձի) համապատասխան մակագրությամբ ցուցակները, հիմք են հանդիսանում ՆՆԾ-ի կողմից ՆՆՓ-ների կազմման համար: Հաստատված ցուցակների մեկ օրինակը տնօրենի (կամ նրա լիազորված անձի) մակագրությամբ փոխանցվում է հաշվապահություն, որտեղ ըստ մուտքագրված վճարների կազմվում է ՆՆՓ-ների պատրաստման պատվերների ցուցակ:
- 2.6 ՆՆՓ-ների կազմման համար սահմանվում է 7 օր:

3. Ներտնային զազասպառման համակարգերի զազիֆիկացման և զազամատակարարման վերականգնման շին-հավաքակցման աշխատանքների կազմակերպումը

- 3.1 ՆՆԾ-ը պատրաստի ՆՆՓ-ների հիման վրա, անհրաժեշտության դեպքում կատարելով նախահաշվի վերահաշվարկ, կազմում է շին-հավաքակցման աշխատանքների կատարման ցուցակները՝ նշելով դիմողի անունը, ազգանունը, հայրանունը, ներտնային զազասպառման համակարգի հասցեն, զազասարքավորումների տիպերը, քանակը, անհրաժեշտության դեպքում նաև ծխաօդատար ուղիների տիպը և քանակը, նախահաշվային արժեքը և ներկայացնում է ԳԳՄ տնօրենի (կամ նրա լիազորված անձի) հաստատմանը:
- 3.2 ԳԳՄ տնօրենի (կամ նրա լիազորված անձի) կողմից հաստատված ցուցակները համապատասխանաբար փոխանցվում են ՆՆԾ և հաշվապահություն:
- 3.3 ՆՆԾ-ի կողմից ըստ ցուցակների ծանուցված բնակիչները՝ պատվիրատուները, համապատասխան անդորրագրերի հիման վրա ԳԳՄ հաշվարկային հաշվին կատարում են շին-հավաքակցման աշխատանքների համար նախատեսված վճարումներ:
- 3.4 ԳԳՄ-ի հաշվապահության և ՆՆԾ-ի կողմից համատեղ կազմվում է շին-հավաքակցման աշխատանքների կատարման համար վճարումները կատարած բնակարանների և առանձնատների ցանկը և ներկայացվում է ԳԳՄ տնօրենի (կամ նրա լիազորված անձի) հաստատմանը:
- 3.5 Հաստատված ցուցակների հիման վրա ՆՆԾ-ի կողմից տարածքային արտադրա-շահագործական ծառայության զազիֆիկացման և զազամատակարարման վերականգնման տեղամասին (այսուհետ՝ ԳԳՎՏ) իջեցվում է շին-հավաքակցման աշխատանքների իրականացման պատվեր – հանձնարարական:
- 3.6 ԳԳՄ-ի ՏԱՇԾ-ների զազիֆիկացման և զազամատակարարման վերականգնման տեղամասը շին-հավաքակցման աշխատանքները իրականացնում է ինչպես սեփական, այնպես էլ ԳՄՕԿ-ով սահմանված չափորոշիչներին համապատասխան ընտրված կազմակերպությունների միջոցով, պայմանագրային հիմունքներով:
- 3.7 Շին-հավաքակցման աշխատանքները սկսելուց առաջ ՏԱՇԾ-ի զազիֆիկացման և զազամատակարարման վերականգնման տեղամասը տեղեկացնում է ՏԱՇԾ-ի պետին

իրականացվող աշխատանքների վրա ՏԱՇԾ-ի համապատասխան տեղամասի կողմից հսկողություն սահմանելու համար:

- 3.8 ԳԳՎՏ-ն ապահովում է շին-հավաքակցման աշխատանքների կատարումը 10 օրվա ընթացքում:
- 3.9 Ներտնային գազասպառման համակարգերի շին-հավաքակցման աշխատանքների ավարտից հետո կազմվում են կատարողական-տեխնիկական փաստաթղթերը և ներկայացվում են շահագործման ընդունող հանձնաժողովին:
- 3.10 Բնակարանների (առանձնատների) սեփականատերերի (վարձակալների, օգտագործողների) հետ միացման պայմանագիր կնքելու պահից սկսած գազի ֆիկացման (գազամատակարարման վերականգնման) և գազաթողարկման աշխատանքների իրականացման համար սահմանվում է 30 օր:

4. Գազասպառման համակարգերի շահագործման ընդունումը ու գազի թողարկումը

4.1 Առանձնատների և բնակարանների ներտնային գազասպառման համակարգը շահագործման ընդունող հանձնաժողովի կազմում ընդգրկվում են`

Նախագահ - ԱՇԾ պետ

- ՇՄԿ ներկայացուցիչ

- սեփականատեր(բնակիչ)

- ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության ներկայացուցիչ:

4.2 Հանձնաժողովը` ներկայացված կատարողա-տեխնիկական փաստաթղթերի հիման վրա սահմանված կարգով փաստագրում է կատարված աշխատանքները և ԳԳՄ տնօրենի (կամ նրա լիազորված անձի) հաստատմանն է ներկայացնում գազահամակարգի շահագործման ընդունման ակտերը:

4.3 Շահագործման ընդունման ակտերի առկայության, բնակչի կողմից շին-հավաքակցման աշխատանքների ամբողջական վճարումներից հետո բնակչին տրվում է կանխավճարի մուծման կտրոն: Վճարումները կատարելուց հետո ԳԳՄ-ի ԳՎ և ՎՎ ծառայությունը ձեռնարկում է հաշվիչ հանգույցի տեղադրման և ներմիացման աշխատանքների կատարումը: Գազի թողարկման աշխատանքները կատարվում է ՏԱՇԾ-ի համապատասխան տեղամասի կողմից` կնքելով ներտնային գազասպառման համակարգի գազամատակարարման պայմանագիր:

Նշված աշխատանքների իրականացման ժամկետը սահմանվում է 10 օր:

4.4 Շահագործման ընդունված և բաժանորդ ձևակերպված առանձնատների և բնակարանների կատարողա- տեխնիկական փաստաթղթերը ըստ ԱՇԾ-ի ցուցակներով ներկայացվում է ԳԳՄ ՇՏԲ` մասնաճյուղի կենտրոնական արխիվում պահպանելու համար:

Ծանոթություն: 1. Այն ԳԳՄ-ներում, որտեղ չկան ԱՇԾ-ներ` ներտնային գազասպառման համակարգը շահագործման ընդունող հանձնաժողովի նախագահ հանդես է գալիս տվյալ ԳԳՄ-ի տնօրենի տեղակալ - գլխավոր ճարտարագետը:

2. Պատվիրատուի կողմից նատուցվող ծառայությունների համար սահմանված գումարները ժամանակին չվճարելու դեպքում ԳԳՄ-ն չի երաշխավորում աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը:

3. Մատակարարի կողմից նատուցվող ծառայությունների համար պատվիրատուի կատարած վճարումները ենթակա չեն վերադարձման, եթե տվյալ վճարի դիմաց աշխատանքները կատարվել են: